Հովհաննես Թումանյան

Անդարձ ճամփորդներ

Իմ անցած կյանքն ու հին տարին,
Երկու անզոր ծերի նման,
Ձըրույց տալով գընում էին
Դեպի աշխարհն հավերժական:

Մինն ասում էր. Ես ունեի
Թարմ ու բուրյան ծաղիկներ,
Ու բոլորը մարդկանց տըվի
Գարնան գըրկովն առատաբեր:

Մյուսն ասում էր. Ես ունեի

Շատ ըզգացմունք ու կորով,
Ու ողջ ես էլ նըրանց տըվի
Սիրանըվեր երգերով:

Մինն ասում էր. Ես թողեցի
Ձըմե՛ռ ու սև՛ էն հովտում:

Մյուսն ասում էր. Ես թախծալի
Մի սիրտ բեկված ու տըրտում:

Մինը ասավ. Բայց կրծաղկի
Էն հովիտը նորից նոր:
Մյուսը էստեղ ոչինչ չասավ,

Ու գնում էր գլխակոր...

Էսպես իմ կյանքն ու հին տարին,
Երկու անզոր ծերի նման,
Ջրրույց տալով գընում էին
Դեպի աշխարհն հավերժական:

1896